



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Տարեցների և կախում ունեցող չափահասների բռնության մասին գեկուցում. Ձեր ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է:

Դեկտեմբեր 2010, հրապ. #7025.10-Armenian

Դուք ճանաչո՞ւմ եք որևէ [տարեցի](#) կամ [կախում ունեցող չափահասի](#), ով կարող է [բռնության](#) կամ [արհամարհանքի](#) զոհ եղած լինել: Բռնությունը և արհամարհանքը ներառում են՝ խոսքով և գործողություններով հասցված վիրավորանք, սեռական հարձակում, ֆիզիկական կամ քիմիական սահմանափակման կամ դեղամիջոցի ոչ պատշաճ օգտագործում, մեկուսացում և ֆինանսական բռնություն:

**Եթե տարեցը կամ կախում ունեցող անձը ապրում է [համայնքում](#),
Դուք պետք է դիմեք՝**

- Ձեր [տեղական օրինապահ մարմիններին](#) (Ձեր ոստիկանական բաժանմունքին կամ ոստիկանապետի վարչությանը):

Եվ/կամ

- Ձեր վարչաշրջանի [չափահասների պաշտպանության ծառայությունների \(APS, Adult Protective Services\)](#) գործակալությանը: Վարչաշրջանի APS գործակալությունները հետաքննում են տարեցների և կախում ունեցող չափահասների բռնության մասին գեկույցները, ովքեր ապրում են մասնավոր տներում և հյուրանոցներում կամ

հիվանդանոցներում և առողջապահական կլինիկաներում, երբ բռնություն կիրառողը անձնակազմի անդամ չէ: Ձեր վարչաշրջանի APS գործակալության տեղը գտնելու համար [սեղմեք այստեղ`](#) APS-ների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար:

Եթե տարեցը կամ կախում ունեցող չափահասը ապրում է հաստատությունում, Դուք պետք է դիմեք`

- [Օրինապահ տեղական մարմիններին](#)

Եվ/կամ

- [Երկարաժամկետ ինսամքի օմբուդսմենին \(Long-Term Care Ombudsman\)](#): Օմբուդսմենն զբաղվում է բռնության այն զեկույցներով, որոնք տեղի են ունենում ծերանոցներում, տուն-ինտերնատներում, հոգեբուժական հաստատությունում, հատուկ կարիքներով անձանց ինսամքի կենտրոններում կամ երկարաժամկետ ինսամքի հաստատություններում: Տեղական օմբուդսմենի ծրագրի հեռախոսահամարները նշված են ինսամքի հաստատությունների, իսկ տեղական ու նահանգային ծրագրերի հեռախոսահամարները մատչելի են Տարեցների վարչության կայքէջում, որտեղ կարելի է այցելել` [սեղմելով այստեղ](#):

Եվ

- [Կայիֆորնիայի հանրային առողջության արտոնագրման և վկայագրման ծրագիր \(\(Department of Public Health \(DPH\)\)](#)): DPH արտոնագրման և վկայագրման ծրագիրը վերահսկում է առողջապահական հաստատությունները, ինչպիսիք են` ծերանոցները, հիվանդանոցները և միջնորդավորված ինսամքի հաստատությունները: DPH-ը հետաքննում է բռնության, արհամարհանքի և վատ որակի ինսամքի մասին բողոքները: Գրասենյակի հեռախոսահամարը պետք է հրապարակվի ծերանոցներում, ինչպես նաև նշվի DHS-ի կայքէջի «Արտոնագրման և վկայագրման», «Ծերանոցային ինսամքի

բնակիչների իրավունքների թերթիկ» բաժիններում: Կայքը կարելի է գտնել [այստեղ](#).

Եվ

- [Կալիֆորնիայի գլխավոր դատախազության Medi-Cal-ի խաբեության և տարեցների բռնության վարչությունը \(California Attorney General Bureau of Medi-Cal Fraud and Elder Abuse\)](#), որն աշխատում է՝ ծերանոցների և երկարաժամկետ խնամքի այլ հաստատությունների բնակիչներին պաշտպանելու բռնությունից կամ արհամարհանքից: Տարեցների կամ կախում ունեցող չափահասների բռնության մասին զեկուլցելու համար դիմեք գլխավոր դատախազության թեժ գծին՝ (800) 722-0432 հեռախոսահամարով կամ այցելեք նրանց կայքէջ՝ [այստեղ](#)՝ բողոք ներկայացնելու համար:

Դուք լիազորված զեկուլցո՞ղ եք:

Դուք կարող եք լիազորված զեկուլցող լինել, եթե Դուք հոգում եք տարեցի կամ կախում ունեցող չափահասի ամբողջական կամ ժամանակավոր խնամքը: Այլ լիազորված զեկուլցողները ներառում են՝

- Խնամքի հսկողներ.
- Մասնավոր գործառույթամբ զվարկող բժիշկներ.
- Ֆինանսական հաստատություններ.
- Վարչաշրջանի բարեկեցության վարչություններ.
- Իրավապահ մարմինների աշխատակիցներ.
- Հրշեջ ծառայությունների աշխատակիցներ.
- Հումանիտար արժեքներ ունեցող հասարակական կազմակերպություններ և կենդանիների վերահսկման գործակալություններ.
- Շրջակա միջավայրի և կառուցապատման նորմերի հարկադիր կիրառման գործակալությունների աշխատակիցներ.
- Հոգևորականության անդամներ.

- Որևէ այլ պաշտպանող, հանրային, աղանդավորական, հոգեկան առողջության, մասնավոր օգնության կամ շահերի պաշտպանության գրասենյակ կամ անձ, ով առողջապահական կամ սոցիալական ծառայություններ է տրամադրում տարեցներիս կամ կախում ունեցող չափահասներին.
- Որևէ անձ, ով ամբողջական կամ ժամանակավոր պատասխանատվություն է ստանձնել որևէ տարեցի կամ կախում ունեցող չափահասի ինամքի համար, անկախ նրանից՝ նրանք վճարվում են, թե՛ ոչ:

Դուք պետք է զեկուլցեք, եթե.

- Չոհր զեկուլցում է, որ բռնությունը տեղի է ունեցել կամ տեղեկություններ ունի բռնության մասին:
- Դուք դիտարկում եք միաջադեպը:
- Երբ վնասվածքը կամ առողջական խնդիրը հիմնավորված կերպով առիթ է տալիս կասկածելու, որ բռնությունը տեղի է ունեցել:

Ե՞րբ պետք է զեկուլցեք:

Օրենքը պահանջում է, որ լիազորված զեկուլցողները անհապաղ կամ հնարավորինս շուտ **բանավոր զեկուլցեն, որին կհետևի գրավոր զեկուլյցը** (SOC 341) երկու (2) աշխատանքային օրվա ընթացքում: SOC 341 ձևաթուղթ ձեռք բերելու համար սեղմեք [այստեղ](#):

Ի՞նչ տեղի կունենա, եթե Դուք չզեկուլցեք որպես լիազորված զեկուլցող:

Չզեկուլցելը հանցանք է, որի համար նախատեսված է պատիժ մինչև վեց ամիս ազատազրկման վարչաշրջանի բանտում և/կամ տուգանք՝ մինչև 1000 ԱՄՆ դոլար չափով:

Սակայն, եթե չզեկուլցելը հանգեցնի մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի, ապա տուգանքը կարող է մինչև 5000 ԱՄՆ դոլարի հասնել:

Իմ տեսուչը կամ որևէ այլ մեկը կարո՞ղ է իմ փոխարեն զեկուցել:

ՈՉ: Չեկուցելը Ձեր պարտականությունն է: Դա նշանակում է, որ **ԴՈՒՔ** զեկույցն ուղղակիորեն ավարտող և այն համապատասխան հետաքննող գործակալություններին տրամադրող անձն էք: Դուք կարող եք ծանուցել Ձեր տեսուչին, բայց նա **չի կարող** Ձեր անունից զեկույց ներկայացնել, քանի որ նա տեղի ունեցած բռնության կամ արհամարհանքի մասին ոչ մի ուղղակի տեղեկատվություն չունի:

Օրենքներ և կանոնակարգեր

- [Կալիֆորնիայի Բարեկեցության և հաստատությունների Օրենսգիրք, §§ 15630-15632 Տարեցների բռնություն և կախում ունեցող չափահասների բռնության քաղաքացիական պաշտպանության օրենք \(Cal. Welf. & Inst. Code §§ 15630-15632 Elder Abuse and Dependent Adult Abuse Civil Protection Act \)](#)
- [Կալիֆորնիայի Բարեկեցության և հաստատությունների Օրենսգիրք § 15700 Պաշտպանիչ տեղադրումներ և վտանգի տակ գտնվող չափահասների ինամակալություն \(Cal. Welf. & Inst. Code § 15700 Protective Placements and Custody of Endangered Adults\)](#)
- [Կալիֆորնիայի Բարեկեցության և հաստատությունների Օրենսգիրք §§ 15703-15705.40 Պաշտպանիչ ծառայություններ \(Cal. Welf. & Inst. Code §§ 15703-15705.40 Protective Services\)](#)
- [Կալիֆորնիայի Քրեական օրենսգիրք § 368 տարեցների և կախում ունեցող չափահասների հանդեպ կատարված հանցագործություններ \(Cal. Pen. Code § 368 Crimes Against Elders and Dependent Adults\)](#)

ՍԱՅՄԱՆՈՒՄՆԵՐ.

«Տարեց».

Նշանակում է 65 կամ ավելի տարիք ունեցող որևէ անձ:

«Կախում ունեցող չափահաս».

18-ից 64 տարեկան որևէ անձ, ով ֆիզիկական կամ մտավոր սահմանափակումներ ունի, որոնք խոչընդոտում են նրա նորմալ գործողությունների կատարմանը կամ իր իրավունքների պաշտպանությանը, որը ներառում, բայց չի սահմանափակվում այն անձանցով, ովքեր ֆիզիկական կամ զարգացման հաշմանդամություն ունեն կամ ում ֆիզիկական կամ մտավոր ունակությունները տարիքի պատճառով նվազել են:

«Տարեցի կամ կախում ունեցող չափահասի բնություն».

Նշանակում է հետևյալից որևէ մեկը.

- (1) Ֆիզիկական բնություն, արհամարհանք, ֆինանսական բնություն, իրավունքից հրաժարում, մեկուսացում, առևանգում կամ այլ վերաբերմունք, որը հանգեցնում է ֆիզիկական վնասի կամ ցավի կամ մտավոր տառապանքի, [կամ]
- (2) Խնամքի հսկիչի կողմից ապրանքների կամ ծառայությունների կորուստ, որոնք անհրաժեշտ են՝ ֆիզիկական վնասից կամ մտավոր տառապանքից խուսափելու համար:

«Տարեցի կամ կախում ունեցող չափահասի արհամարհանք».

Նշանակում է հետևյալից որևէ մեկը.

- (1) Տարեցի կամ կախում ունեցող անձի խնամքը հոգացող անձի կողմից խնամքն անփութությամբ չկատարելը, որը նման պարտականություն ունեցող ողջամիտ անձը կկատարեր:
- (2) Տարեցի կամ կախում ունեցող չափահասի իր ինքնախնամքն անփութությամբ չկատարելը, որը նման վիճակում եղող ողջամիտ անձը կկատարեր:

Օրինակ՝ անփութությունը նաև ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- (1) Անձնական հիգիենայի հոգալուն չաջակցելը կամ սնունդ, հագուստ կամ ապաստարան չտրամադրելը:

- (2) Բժշկական խնամք չտրամադրելը, որն անհրաժեշտ է ֆիզիկական և մտավոր առողջական կարիքների համար:
- (3) Առողջության և ապահովության վտանգներից չպաշտպանելը:
- (4) Թերսնուցումը կամ ջրագրկումը չկանխելը:
- (5) Տարեցի կամ կախում ունեցող չափահասի կողմից կարիքները չբավարարելը, որոնք սահմանված են (1)-ից (4) պարբերություններում, ներառյալ իր համար՝ որպես ճանաչողական վատ գործառույթների, մտավոր սահմանափակումների, թմրանյութերի չարաշահման կամ խրոնիկական վատ առողջության արդյունք: (Նաև հայտնի է որպես «ինքնարհամարհանք»):

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցումը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա):

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝

[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).